«Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Դեպքի վայրի զննություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Բակալավրիատ, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Օպերատիվ-հետախուզական գործունեության և կրիմինալիստիկայի ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Բ. Ալեքսանյան, Լ. Սարդարյան E-mail: benik1962@mail.ru, հեռ.091-35-83-13 E-mail: lusine.sardarian@gmail.com, հեռ. 093-85-53-05
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		2 (երկու)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ		«Դեպքի վայրի զննություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 32 ժամ, որից 16 դասախոսություն, 6 ժամ սեմինար, 10 ժամ գործնական և 28 ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է ստուգարքով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական դատավարություն», «Կրիմինալիստիկա» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		Դեպքի վայրի զննություն դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են դեպքի վայրի զննության կարգը, դեպքի վայրի պահպանությունը, պլանների և սխեմաների կազմումը դեպքի վայրի զննության արդյունքներով, դեպքի վայրի զննությունը դիակի առկայության պայմաններում, դեպքի վայրի զննությունը շինություններում, դեպքի վայրի զննությունը հրազենային վնասվածքների առկայության դեպքում, դեպքի վայրի զննությունը հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների գերծերով, դատական փորձաքննությունների նշանակումը դեպքի վայրի զննության արդյունքներով:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել համապարփակ տեսական գիտելիքներ և ձևավորել գործնական կարողություններ դեպքի վայրի զննության հասկացության, խնդիրների, պրակտիկայում առավել հաճախ հանդիպող իրավիճակներին բնորոշ առանձնահատկությունների, դեպքի վայրի զննության արդյունքներով դատական փորձաքննությունների նշանակման մարտավարությանը: Դասընթացի խնդիրներն են՝ 1. ներկայացնել դեպքի վայրի զննության հասկացությունը և ընդհանուր դասակարգումը, 2. պարզաբանել ՀՀ-ում դեպքի վայրի զննության ընթացքը կարգավորող իրավական հիմքերը, 3. ներկայացնել դեպքի վայրի պահպանության ընդհանուր կանոնները և մասնավոր առանձնահատկությունները, 4. ուսումնասիրել պլանների և սխեմաների կազմման եղանակները դեպքի վայրի զննության արդյունքներով, 5. դիակի առկայության պայմաններում դեպքի վայրի զննության առանձնահատկությունները, 6. շինություններում դեպքի վայրի զննության առանձնահատկությունները, 7. հրազենային վնասվածքների առկայության դեպքում դեպքի վայրի զննության առանձնահատկությունները, 8. դեպքի վայրի զննության առանձնահատկությունները ՃՏՊ-ների գործերով 9. հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների գործերով դեպքի վայրի զննության առանձնահատկությունները, 10. դեպքի վայրի զննության արդյունքներով դատական փորձաքննությունների նշանակումը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		ա) վերլուծել դեպքի վայրի զննության տեսական հիմնախնդիրները, բ) քննարկումներ և բանավեճեր ծավալել հորինվածքային իրավիճակներում հնարավոր լուծումների շուրջ, գ) ապահովել դեպքի վայրի պահպանությունը, դ) տիրապետել պլանների և սխեմաների կազմման տեխնիկային, ե) առանձնացնել այն օբյեկտները, որոնք հետագայում կարող են օգտագործվել դատական փորձաքննություն նշանակելիս, զ) կիրառման ենթակա տեխնիկական միջոցների և նյութերի ճիշտ ընտրություն կատարել, է) կազմել դեպքի վայրի զննության արձանագրությունը:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, 2. «Հետաքննության մարմինների աշխատակիցների կողմից դեպքի վայրը պահպանելու կանոնները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 4 հոկտեմբերի 2018 թվականի N 1106-Ն որոշում, 3. Դեպքի վայրի զննության ուղեցույց: ՀՀ ոստիկանության պետի հրաման **թիվ 2288 - Ա 29.08.2017 թ,** 4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություն-

		ներով) – Երևանի պետ. Համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2004 – 416 էջ, 5. Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք /Լևոն Օհանյան. – 2-րդ հրատ.՝ փոփոխ. և լրաց. – ԵՊՀ հրատ., 2010. 512 էջ, 6. Օհանյան Լևոն. Կրիմինալիստիկա: - Երևանի պետ. Համալս. – Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2004 – 504 էջ, 7. Կրիմինալիստիկա: ՈՒս. Ձեռնարկ /Ա.Հ. Բախշինյան, Բ.Զ. Ալեքսանյան, Ս.Ա. Մարգարյան. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2003. – 228 էջ, 8. Պլանների, սխեմաների կազմումը դեպքի վայրի զննության ընթացքում. գիտագործնական ձեռնարկ /Բ.Ալեքսանյան, Հ.Կուծանյան, Լ.Սարդարյան/ 2019թ 9. Белкин Р.С. Криминалистика: проблемы, тенденции, преспективы. От теории к практике. М.: ЮЛ, 1988., 10.Белкин Р.С. Криминалистика. Краткая энциклопедия. М.: РЭ, 1989.,
Լրացուցիչ		11. Криминалистика: учебник для бакалавров /Ю. В. Францифоров, А.Б. Смушкин, А.А. Рождествина. – 2-е изд., стер. – М.: Издательство <<Омега – Л>>, 2015 – 260 с., 12. Криминалистика: учебник / под общей ред. А.Г. Филиппова. – изд., перераб. и доп. – М.: Высшее образование. 2009. – 835 с., 13. Криминалистика: учебник / под ред. А.Г. Филиппова. – М.: Высшее образование, Юрайт – Издат, 2009, - 441с, 14. Криминалистика: учебник /Т.В. Аверьянова, Р.С. Белкин, Ю.Г. Корухов, Е.Р. Россинская. – 3-е нзд., перереб. и доп. – М.: Норма, 2008. – 944с.: ил 15. Криминалистика: Учебник для вузов /Под ред. заслуженного деятеля науки РФ, проф. Р.С. Белкина. – 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2005. – 992с, 16. БАЕВ О.Я.Основы криминалистики: курс лекций, - М.: Экзамен, 2001. – 288с., 17. Ալեքսանյան Մ., Նախնական քննություն. Եր. 2002 – 770 էջ: 18.Ալեքսանյան Մ. Փորձաքննությունը քրեական դատավարությունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/.- Եր.: Միվա-Պրեսս, 2009 19.Ա.Բ. Ավագյան, Ա.Գ. Հովսեփյան, Տ.Ռ. Պետրոսյան. <<Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան>>, Եր., <<այբ-Քե>>. 1993թ. 20. Шашонова Т.Н. Следы человека на месте преступления, их роль в доказывании (биологический аспект). – М.: МосУ МВД России. Издательство <<Щит –М>>, 2009. – 153с 21. Справочная книга криминалиста /Руководитель авторского коллектива и ответственный редактор –доктор юридических наук, професор, Заслуженный деятель науки Россиской Федерации Н.А.Селиванов.-М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИНФРА - М), 2001 – 727с 22. Н.П. Майлис, Т.Ф. Одиночкина, О.А.Соколова. Трассологиа: Учебник /Под ред. Н.П. Майлис. – М.: Щит – М, 2011. – 328с 23. Процессуальные акты предварительного расследования. Примерные образцы. Москва. <<Юридическая литература>>. 1991 24. Осмотр места происшествия. Справочник следователя. Москва.: <<Юридическая литература>> 1982

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգման ձևը ստուգարք	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար	Գնահատականը տառանշումով

		միավոր	
			ստուգված
			չստուգված
			չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:	
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
		Դասապլանի որևէ փոփոխություն նախորոք կտեղեկացվի սովորողին:	
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:	
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:	
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:	

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 1 **Դեպքի վայրի զննության կարգը և դեպքի վայրի պահպանության կազմակերպումը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դեպքի վայրի զննության հասկացությունը, խնդիրները և տեսակները 2. Դեպքի վայրի զննության իրականացման հիմնական սկզբունքները 3. Դեպքի վայրի զննության մասնակիցները 4. Դեպքի վայրի զննության նախապատրաստությունը կատարված հանցագործության մասին հաղորդում ստանալուց հետո (մինչև դեպքի վայր մեկնելը) և դեպքի վայրում՝ մինչև զննումը սկսելը 5. Դեպքի վայրի պահպանությունը	Հարցեր 1-5 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-5 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:

Թեմա 2 **Դեպքի վայրի զննության արդյունքներով պլանների և սխեմաների կազմումը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ապացույցների ամրագրման գրաֆիկական ձևի կրիմինալիստիկական հասկացությունը 2. Պլանների և սխեմաների հասկացությունը և տեսակները 3. Պլաններին և սխեմաներին ներկայացվող պահանջները 4. Պլաններ և սխեմաներ պատրաստելը	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն: Հարց 4 գործնական պարապմունք կրիմինալիստիկական փորձակայանում

Թեմա 3 **Դեպքի վայրի զննությունը դիակի առկայության պայմաններում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դեպքի վայրում դիազննության խնդիրներն ու նպատակները 2. Տուժածի ինքնության պարզման նպատակով ձեռնարկվող միջոցառումները դեպքի վայրի զննության ընթացքում 3. Դիակը և դրա վրա եղած վնասվածքները արձանագրության մեջ նկարագրելը	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն, որն ուղեկցվում է տարբեր տեխնիկական միջոցների ցուցադրումով: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: Կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 4 **Դեպքի վայրի զննությունը շինություններում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Խոչնդոտները կոտրելու միջոցով շինություններից, պահեստարաններից, բնակարաններից կատարված հափշտակությունների դեպքի վայրերի զննության առանձնահատկությունները 2. Զննության ընթացքում հայտնաբերված կոտրանքի հետքերի նշանակությունը և հափշտակության ձևացման հատկանիշների պարզումը	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 գործնական պարապմունք կրիմինալիստիկական փորձակայանում:

Թեմա 5

Դեպքի վայրի զննությունը հրազենային վնասվածքների առկայության դեպքում (2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դեպքի վայրում հայտնաբերված հրազենի (գործարանային, ինքնաշեն) զննության առանձնահատկությունները 2. Դեպքի վայրում հայտնաբերված հրազենի ռազմամթերքի (փամփուշտ, գնդակ, պարկուճ, կոտորակ, խից) զննության առանձնահատկությունները 3. Դեպքի վայրում հայտնաբերված կրակոցի հետքերի (հեռու և մոտ տարածություններից կրակված, խոչընդոտի նյութով պայմանավորված) զննության առանձնահատկությունները	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ Հարցեր 1-3 գործնական պարապմունք կրիմինալիստիկական փորձակայանում:

Թեմա 6 Դեպքի վայրի զննությունը ճանապարհատրանսպորտային պատահարների գործերով (2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՃՏՊ-ի վայրի զննության ընդհանուր խնդիրները 2. Հիմնական գործողությունները ՃՏՊ-ի վայրի զննության ընթացքում 3. Տրանսպորտային միջոցի զննությունը ՃՏՊ-ի վայրում	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն Հարց 3 գործնական պարապմունք կրիմինալիստիկական փորձակայանում:

Թեմա 7 Դեպքի վայրի զննությունը հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների գործերով (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների գործերով դեպքի վայրի զննության խնդիրները 2. Հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների գործերով դեպքի վայրի ընդհանուր և մանրամասն զննության առանձնահատկությունները	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: Կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 8 Դատական փորձաքննությունների նշանակունը դեպքի վայրի զննության արդյունքներով (2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հատուկ գիտելիքների օգնությամբ պարզման ենթակա հանգամանքները 2. Փորձագետին հարցեր առաջադրելը 3. Դեպքի վայրի զննության ընթացքում փորձաքննության նշանակման համար նյութեր հավաքելը	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 գործնական պարապմունք կրիմինալիստիկական փորձակայանում:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Դեպքի վայրի զննության» առարկայից
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման 3-րդ կուրսի ստուգարքի

1. Դեպքի վայրի զննության հասկացությունը, խնդիրները և տեսակները
2. Դեպքի վայրի զննության իրականացման հիմնական սկզբունքները
3. Դեպքի վայրի զննության մասնակիցները
4. Դեպքի վայրի զննության նախապատրաստությունը կատարված հանցագործության մասին հաղորդում ստանալուց հետո (մինչև դեպքի վայր մեկնելը) և դեպքի վայրում մինչև զննումը սկսելը
5. Դեպքի վայրի զննության պահպանությունը
6. Ապացույցների ամրագրման գրաֆիկական ձևի կրիմինալիստիկական հասկացությունը
7. Պլանների և սխեմաների հասկացությունը և տեսակները
8. Պլաններին և սխեմաներին ներկայացվող պահանջները
9. Պլաններ և սխեմաներ պատրաստելը
10. Դեպքի վայրում դիազննության խնդիրներն ու նպատակները
11. Տուժածի ինքնության պարզման նպատակով ձեռնարկվող միջոցառումները դեպքի վայրի զննման ընթացքում
12. Դիակը և դրա վրա եղած վնասվածքները արձանագրության մեջ նկարագրելը
13. Խոչնդոտները կոտրելու միջոցով շինություններից, պահեստարաններից, բնակարաններից կատարված հափշտակությունների դեպքի վայրերի զննության առանձնահատկությունները
14. Զննության ընթացքում հայտնաբերված կոտրանքի հետքերի նշանակությունը և հափշտակության ձևացման հատկանիշների պարզումը
15. Դեպքի վայրում հայտնաբերված հրազենի (գործարանային, ինքնաշեն) զննության առաննահատկությունները
16. Դեպքի վայրում հայտնաբերված հրազենի ռազմամթերքի (փամփուշտ, գնդակ, պարկուճ, կոտորակ, խից) զննության առանձնահատկությունները
17. Դեպքի վայրում հայտնաբերված կրակոցի հետքերի (հեռու և մոտ տարածություններից կրակված, խոչընդոտի նյութով պայմանավորված) զննության առանձնահատկությունները
18. ՃՏՊ-ի վայրի զննության ընդհանուր խնդիրները
19. Հիմնական գործողությունները ՃՏՊ-ի վայրի զննության ընթացքում
20. Տրանսպորտային միջոցի ղննությունը պատահարի վայրում
21. Դեպքի վայրի զննության խնդիրները հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների գերծերով
22. Դեպքի վայրի ընդհանուր և մանրամասն զննության առանձնահատկությունները հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների գործերով
23. Հատուկ գիտելիքների օգնությամբ պարզման ենթակա հանգամանքները
24. Փորձագետին հարցեր առաջադրելը
25. Դեպքի վայրի զննության ընթացքում փորձաքննության նշանակման համար նյութեր հավաքելը